յաստան եւ Գերմանիա) վերնագրով մի գրքոյկ, որ լոյս է տեսել պատերազմի օրերին:

Ըստ երեւոյթին Դ-ր Ռոթ հայագիտութիւնն է ընտրել իր ապագայ ուսումնասիրութիւնների յատուկ մարդ:

Դեռ մի տարի առաջ ինձ գրած մի նամակում նա պարզում էր իրեն առաջադրած նպատակը՝ հիմնել մի այնպիսի գիտական հանդէս, որ իր շուրջը կենտրոնացնէր ինչպէս եւրոպացի, այնպէս նաեւ հայ ուսումնասիրողներին, եւ որը կոչուած լինէր չօշափելու հայագիտութեան բոլոր ճիւղերը անխտիր: Իր այդ նախագիծն է ահա, որ այժմ գործադրութեան է դրուում:

Հայկական հանդէսի յառաջաբանում գիտնական խմբագիրը ասում է.

«Հայագիտական ուսումնասիրութիւնները Գերմանիայում ունեցել են իւրայատուկ ճակատագիր: Նրանք զուրկ են եղել մի կենտրոնական օրգանից, որ նրանց յենարան հանդիսանար նպատակորոշ աշխատանքների համար: Եթէ այս կամ այն դէպքում փորձ է արուել այդ ուղղութեամբ, ապա նա վերջ է գտել ողբերգական պատահականութեամբ: Դրա պատճառը մասամբ այն է, որ հայագիտութիւնը մշակուել է ի միջի այլոց միայն, պատահականօրէն: Եւ սակայն հայերէնը սկսում է տակաւ աւելի մեծ նշանակութիւն ստանալ Առաջաւոր Արեւելքի — մանաւանդ լեզուապատմական եւ պատմական մարդի մէջ: Այս հանդէսի խմբագիրը չատոնց ջանադիր է եղած՝ հիմնելու մի այնպիսի գիտական օրգան, որ ընդգրկէր հայկական ամէն տեսակ ուսումնասիրութիւններ, որ հայերի համար եւս դառնար մի տեսակ յենարան ու հաւաքատեղի՝ նպաստելու Առաջաւոր Ասիայի ուսումնասիրութեան խորացմանը»:

«Արմենիաֆա» հանդէսը պիտի հիւրընկալէ ամէն տեսակ աշխատութիւններ, որոնք նախ եւ առաջ հայ լեզուագիտութեան, քաղաքական եւ եկեղեցական պատմութեան, ազգագրութեան եւ արուեստի պատմութեան կը վերաբերին: Նրա էջերը բաց են նաեւ՝ այնչա՞փ կարեւոր բարբառագիտութեան, արձանագրութեանց, մանր բնագիրների հրատարակութեան համար: Բայց այս հանդէսը չի սահմանափակուելու դրանով: Հայերէնը եւ հայագիտութիւնը չէ՞ որ սերտ կապ ունին հարեւան շրջանների հետ, որոնք եւս կարող են լոյս սփռել հայերէնի վրայ, եւ ընդհակառակը՝ հայերէնը՝ դրանց վրայ: Այդպիսով սպասելի է, որ դեռ եւս շատ մութ կէտեր լուսաբանուին լեզուական եւ պատմական մարդերում: Ուրեմն, մեր հանդէսը իր սիւնակները բաց է անում նաեւ այդ՝ հարեւան մարդերի առաջ, որչափով նրանք կապակցութեան մէջ կը դրուին հայագիտութեան հետ: Այդպիսիք են՝ հեթիթական, թոխարական, բասկեան, փռիւգական, էտրուսկեան եւ կովկասեան լեզուների ուսումնասիրութիւնները մի կողմից, միւս կողմից էլ՝ հայ ժողովուրդի մշակոյթային եւ պատմական աղերսները իր դրացի ժողովուրդների հետ, որոնց կողքին նա ապրել է, եւ կամ որոնք տիրել են նրան»:

Armeniaca հանդէսի առաջին գիրքը (Լայպցիգ, 1926) ունի 132 էջ, հետեւեալ բովանդակութեամբ. 1. Կարլ Ռոթ՝ Հայագիտութիւնը եւ նրա արդի խնդիրները, 2. Իոզէֆ Ստրժիգովսկի՝ Հայաստան ու Եւրոպայի նախահռոմէական փայտաշէն ճարտարապետութիւնը, 3. Իւհաննէս Շվիդէր՝ Գեղարուեստի եւ բնութեան փաստեր (քարտէսով միասին), 4. Մատենախօսական եւ մատենագրական նոթեր:

* * *

Կարլ Ռոթի յօդուածը՝ «Հայագիտութիւնը եւ նրա արդի խնդիրները», վերարտադրութիւն է հեղինակի մի գիտական բանախօսութեան, որ նա կարդացել է Բերլինում 1923 թուականին, Գերման Արեւելագէտների համագումարին:

«Հայկական հարց գոյութիւն ունի,— ասում է Ռոթ իր բանախօսութեան ուսումնասիրութիւնը,— ոչ միայն քաղաքական, այլ եւ գիտական մարդում,— առաջինի չափ հին ու դժուարին: Եթէ հայ-քաղաքական հարցը տակաւին դրեթէ չէ լուծուած, եթէ աշխարհը երջանկացնող հանճարեղ մարդիկ իրենց անկարողութիւնն են հանդէս բերել այդտեղ, ինչպէս եւ սմենուր, դրա հակառակ՝ գիտութիւնը մատնանշել կարող է իրապէ՛ս կատարուած գործեր, որոնք աշխատել են մի անսովոր սրամտութեամբ լոյս սփռել մթին խնդիրների վրայ»: